№ 24 Շաբաթ Փետրվարի 27 — 1888 — Շաբաթ Փետրվարի 27 № 24

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *ռուբլի է, վեց ամսվանը* 6 *ռուբլի։*

Գրվել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (*Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։*)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Երեսփոխաններ և ընտրողական սկզբունքը. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.*—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.*—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ *Հայ-կաթոլիկութեան մուտքը Վրաստան և վրացախօս հայ-կաթոլիկները.*

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՍՓՈԽՆԵՐ ԵՒ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

«Եկեղեցիների երեսփոխանները հաշիւ չեն տալիս. երեսփոխանները եկեղեցական փողերը ուտում են»,—ահա այն անվերջ գանգատները, որոնք անդադար և ամեն կողմից լսվում են։ Այդպէս են գանգատվում և ամենափոքրիկ գիւղերում, այդպէս են գանգատվում և քաղաքներում, այդպէս են գանգատվում նոյն իսկ այն քաղաքներում, որտեղ կան կօնսիստորիաներ։ Այդ գանգատները, որոնք համարեա բոլորն էլ արդարացի և ճիշդ են, ցաւալի տպաւորութիւն են անում երկու պատճառով. նախ, որ եկեղեցական փողերը՝ իբրև հասարակական սեփականութիւն՝ վատնելը աններելի վարմունք է, և երկրորդ՝ որ մեր եկեղեցիների երեսփոխանները ընտրվում են ծըխականների կողմից, ազատ ընտրողական սկզբունքով, բայց և այնպէս դրանց գործունէութիւնը մեծ մասամբ չէ արդարացնում այդ բոլոր յոյսերը, որ կարելի է ունենալ ընտրողական ազատ սկզբունքի գործադրութիւնից։

Մենք մտածել անգամ չենք կարող, որ երեսփոխանների այդ անաջող և վնասակար գործունէութիւնը հետևանք է ընտրողական սկզբունքի։ Ընդհակառակն, որտեղ երեսփոխանների ընտրութիւնը կատարվում է ծխականների կողմից, որտեղ երեսփոխանները ընտրվում և պաշտօնի մէջ են մտնում որոշ ժամանակով, այնտեղ դրանց գործունէները այնքան էլ յանդուգն չեն լինում, որքան այն տեղերում, ուր տեղական այս կամ այն ազան զանազան ճարպիկութիւններով կարողանում է տասնեակ տարիներով եկեղեցու գանձը իր սեփական շահերի ազբիւր դարձնել։ Ճշմարիտ է, մեր ժողովուրդը դեռ չէ կարողանում արժանաւոր կերպով օգտվել ընտրողական սկզբունքից, դեռ չէ կարողանում խիստ կօնտրոլ անել իր բոլոր հասարակական գործերի վրա, բայց և այնպէս միշտ պէտք է ամուր կերպով պաշտպանել այդ սկզբունքը, ապա թէ ոչ գործունէները և եկեղեցական փողերի յափշտակութիւնը կը տասնապատկվեն։

Ուշադրութիւն դարձնելով երեսփոխանների դէմ եղած գանգատների վրա, դժուար չէ նկատել, որ գործունէներ կատարող երեսփոխանները համարեա միշտ նրանք են, որոնք մի տեսակ մօնոպոլիա են շինել իրանց համար այդ պաշտօնը,—որ, ի հարկէ, անբարեխիղճ մարդու համար շատ ձեռնտու պաշտօն է,—և տարիներով ղեկավարում են եկեղեցու բոլոր գործերը, առանց որ և իցէ հաշիւ տալու հասարակութեանը։ Հասարակական կօնտրոլից ազատ մնալու համար այդ մարդիկ ամեն կեղտոտ միջոցներով իրանց համար մի զօրեղ կուսակցութիւն են կազմում։ Զարմանալի չէ ուրեմն, որ այդպիսի մարդկանց ղեկավարութեան տակ գտնված եկեղեցիները միշտ աղքատ, միշտ անփող և միշտ ողորմելի դրութեան մէջ են գտնվում, թէև ժողովուրդը միշտ տուել, միշտ նուիրել, միշտ օգնել է եկեղեցուն։ Մեր եկեղեցական փողերի գլխաւոր ուտողներից այդ երեսփոխներն են եղել և են։

Այդ ցաւալի երևոյթի մէջ աւելի ցաւալի կէտը այն է, որ այդպիսի գործունէներ կատարվում են ոչ թէ միայն յետընկած տեղերում, այլ և այնպիսի քաղաքներում, ինչպէս Բաքուն է,—ուր հէնց այս րոպէիս երեսփոխանի խնդիրը յուզում է հասարակաց կարծիքը, ինչպէս Երևանն է, Շուշին է, և այլն։ Եթէ մի գիւղում ժողովուրդը չէ կարողանում օգտվել իր ընտրողական իրաւունքից, եթէ մի գիւղում ժողովուրդը չէ կարողանում հաշիւ պահանջել իր երեսփոխ-աղայից,—այդ մասամբ հասկանալի է. բայց երբ նոյն երեւոյթը նկատվում է մեծ քաղաքներում, որտեղ հասարակութիւնը պէտք է վաղուց ճանաչէր իր իրաւունքները,—այդ միանգամայն անհասկանալի է։ Մենք համոզված ենք, որ եթէ երեսփոխանական գործում ընտրողական սկզբունքը ճշգրտութեամբ գործադրվի, եթէ ամեն տարի, կամ երկու տարին մի անգամ նոր երեսփոխ ընտրվի եկեղեցու համար, եթէ ամեն տարի կանոնաւոր հաշիւ պահանջվի երեսփոխից և այդ հաշիւը հրատարակվի, այն ժամանակ այդ բոլոր գործունէները տասն, քսան անգամ կը քչանան, և մենք ամենքս էլ ստիպված չենք լինի ականատես լինելու, թէ ինչպէս զանազան մարդիկ ամենաանվայել կերպով յափշտակում են եկեղեցական-հասարակական փողերը, և չեն էլ ուզում հաշիւ տալ հասարակութեանը իրանց արարքների համար։

Եւ այդ օգտաւէտ միջոցների գործադրութեան մասին պէտք է մտածել նոյն ինքն հասարակութիւնը։ Եթէ մի մասնաւոր մարդ երեսփոխ է դարձել և գործունէներ է գործում, արժանի է յանդիմանութեան և պատժի, աւելի մեծ յանդիմանութեան է արժանի այն հասարակութիւնը, որ իր անհոգութեամբ և անտարբերութեամբ թոյլ է տալիս այդպիսիներին գործունէներ գործելու։

Ի դէպ. «Մշակի» անցեալ համարում Բաղուի մեր թղթակիցը ի միջի այլոց գրում է. «Ներկայումս Բաղուի հասարակութեան ուշադրութիւնը զբաղված է ս. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխի հարցով։ Այդ եկեղեցու երեսփոխը իր համար մի տեսակ մօնոպոլիա էր դարձրել երեսփոխութիւնը, որը ժառանգելով հօրից, մօտ 17 տարի է ինչ վարում է այդ պաշտօնը, և այդքան ժամակի ընթացքում կանոնաւոր հաշիւ չէ ներկայացրել հասարակութեանը»։

Այդ երեսփոխը, ի հարկէ, մեղաւոր է, որ այդպէս է նայում մի հասարակական գործի վրա։ Բայց ինչ էր մտածում ամբողջ 17 տարի Բաղուի հասարակութիւնը. ինչու՞ այդքան միջոցում հաշիւ չէր պահանջում, ինչու՞ նոր և արժանաւոր մարդ չէր ընտրում։

Ուրեմն ո՞վ է աւելի մեղաւորը, ամբողջ հասարակութիւնը թէ մի մասնաւոր մարդ։ Զը պէտք է մոռանալ, որ այն, ինչ որ ներելի է մի մասնաւոր մարդու, այն ներելի չէ կարող լինել ամբողջ հասարակութեանը....

*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՑԱԽՕՍ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

(Նիւթեր հայ-կաթոլիկութեան պատմութեան)

Ա.

Աշխատելով, որքան կարելի է, մոռացութեան տալ անցեալի տխուր յիշողութիւնները, և յոյս ունենալով ապագայի վրա, ականատես ընդհատում ենք մեր երկարժամանակեայ թղթակցական լռութիւնը, նորից նիւթ առնելով Անդրկովկասի հայ-կաթոլիկ հասարակութեան առօրեայ խնդիրներն ու հետաքրքրութեան արժանի հասարակական հարցերը։

Բայց ցաւօք սրտի պէտք է նկատենք, որ մեր լրագրական չափազանց նեղ սիւնակները բոլորովին անբաւական են ընդարձակ տեսութեան ենթարկելու նախ՝ թէ որ ժամանակներից հայերը դաղթականութիւններ հիմնել էին Վրաստանում, քանի որ, հայոց և վրաց սերտ յարաբերութեան գործը, և նրանց քաղաքական ու կրօնական երկարատև դաշնակցութիւնը արդէն անվիճելի պատմական իրողութիւն է, որը ընդարձակօրէն բըռնել է այդ երկու ցեղակից, դրացի ազգերի պատմութեան տխուր էջերը. այդ գործը վայել է աւելի ձեռնհաս և կարող անձանց, որոնց վրա պէտք է յոյս ունենայ ամեն մի բանասէր. այս անգամ մեր նպատակը պէտք է լինի մի համառօտ տեսութեան ենթարկել թէ, որ ժամանակներում և որոց ձեռքով հայ-կաթոլիկութիւնը մուտք է գործել Վրաստան և որպիսի՞ ներքին ու արտաքին հանգամանքների ազդեցութեան տակ։

Դեռ ևս 1393 թուականում, ուղիղ այն ժամանակ, երբ Կիլիկիայի մէջ, Եգիպտոսի և Բաղդադի Սուլթանների ձեռքով հանգաւ հայ ազգի քաղաքական վիճակը, իսկ Հռօմի պապերու և լատին կրօնաւորների ձեռքով պատրաստած կրօնական ահռելի երկպառակութիւնը արդէն խառնակել էր հայ ժողովրդեան ներքին, բարոյական վիճակը, լատինականութեան դիմած հայ-ունիթօռները Կիլիկիայից Ատրպատական անցնելով, և տարածված լինելով Արարատեան աշխարհը՝ Շիրակ, Տայոց աշխարհը, Լօռին, անցել և հաստատվել էին նաև Վրաստան, և Թիֆլիսի մէջ նոքա հաստատած ունէին մի եկեղեցի։

Բայց նախ քան այդ հայ-ունիթօռների կրօնափոխութեան եղանակի և անձնաւորութիւնների վրա տեղեկութիւն տալը, հարկաւոր է, մեր կարծիքով, մի ակնարկ ձգել այն ժամանակի հռօմէական և հայկական եկեղեցիների պատմութեան վերա, որպէս զի կարելի լինի գաղափար կազմել թէ ո՞րպիսի շրջանում առաջ եկաւ կրօնափոխութեան խնդիրը, և որպէս գործադրվեցաւ նա իր նպատակին հասնելու համար։

Արդէն ութ անգամ կրկնված խաչակրութեան պատերազմի պատճառով, (1096—1270) Հռօմի եկեղեցին հետամուտ էր եղած հայոց եկեղեցին կլանելու. բազմաթիւ անգամ, զանազան պապեր, զանազան կրօնական խնդիրներով այնքան պըղտորել էին հայ-եկեղեցականների ունեցած վարդապետութիւնը, որ նոցանից շատերը, ականատես ընդունում էին պապերի առաջարկութիւնները, քանի որ, նախ քաղաքական տեսակէտով շատ խընդիրներում կախումն ունէին Արևմուտքից։ Բաւական չէին յունական քաղաքականութեան ծանրը և անտանելի հարուածները, որ տարել էր հայ եկեղեցին, պապական աւելի ծանր, խստապահանջ առաջարկութիւններն միանգամայն, իր Անտիոքի պատրիարքարանի և հայ լատինացեալ իշխանների ազդեցութեամբ, կատարելապէս հըպատակեցրել էին հայոց կաթողիկոսութիւնը և իշխանութիւնը։

Իզուր էր աշխատում պապական եկեղեցին բռնի կերպով Սսի մէջ ժողովներ գումարել տալով, և այնպիսի խնդիրներ առաջարկելով հայ եկեղեցականներին, որոնց ընդունելը սարսափելի խռովութիւնների, երկպառակութիւնների և եղբայրատեցութեան դատապարտելի վախճանին պիտի հասնէին, որից մեծապէս վնաս ունեցաւ հայոց աշխարհը։

Դորա հակառակ, Մեծ Հայաստանի ժողովուրդը, հաւատարիմ մնալով իր մայրենի եկեղեցու դարևոր սովորութիւններին և առաքելական նախկին վարդապետութեանը, ձորագետացիների, սանահնեցի, և հաղբատցի կուսակցութիւնների բերանով այնպիսի բողոք էին անում պապի և Հռօմի եկեղեցուն խոնարհող հայ եկեղեցականների դէմ, որ անկարելի էր, եթէ երկիրը խառնակութեան և չփոթման կենտրոն չը դառնար, որով քրիստոնէական եկեղեցին և վարդապետութիւնը, քաղաքականութեան և դառն կրքերի միջոց էր դառել ժողովրդի սիրտը և հաւատը գայթակղեցնելու համար։

*Կրօնական այդպիսի ներքին խառնակութեան պատճառով, երբ հայոց քաղաքական ոյժերն երթալով արդէն սպառման մօտ էին, երբ հայ ազգը իր ներքին բարեկարգութիւնը և զինուորական ոյժը բարձի թողի արած, կրօնական անվերջ վիճաբանութեան մէջ էր, Հայաստանի արտաքին թշնամիներն երթալով սաստկապէս և սաստկապէս հզօրանալով, արշաւում էին Հայաստանի վրա, և իրանց քաղաքական տեսակէտով ստիպում էին հայոց Լեոն թագաւորին իսպառ դադարեցնել իր յարաբերութիւնը Արևմտեան կայսրների և պապի հետ. Լեոնը երդում է տալիս թողնել Արևմուտքը, բայց Բենեդիկտոս պապը, հակառակ քրիստոնէական օրինաց, լուծում է Լեոնի երդումը *), որի պատճառով եգիպտացիները զայրագին կատաղութեամբ արշաւում են դէպի հայոց աշխարհը և աւերում են եկեղեցիները և բոլոր շինութիւնները։ Այդպէս և պապը իր խոստմունքը դրժում է դրամական վարձատրութիւն և օժանդակութիւն ուղարկելու այն ժամանակ, եթէ հայերը երբեմն համարձակվում էին բողոքել իր կրօնաւորների գայթակղեցուցիչ գործերի դէմ։ Բայց չը նայելով, որ պապականութիւնը արևելքի մէջ այդքան զօրաւոր էր, իսկ բուն Հռօմի մէջ պապականութիւնը սաստիկ երերման մէջ էր, եկեղեցին բռնացել էր ժողովրդի վրա, իսկ եկեղեցականները հալածում էին միմեանց։ Ուրբանոս Զ. և Կղէմէնտ Է., որպէս երկու հակաթոռ պապեր, աշխատում էին մէկը միւսի ձեռքից խլել պապականութեան անսխալական աթոռը, որոնց յաջորդների հետ աւելացաւ նաև Յովհաննէս ԻԳ. պապը, և այդպիսով, պապական եկեղեցու գլխաւորութեան իրաւունքը, որը հիմնված էր անսխալականութեան և ուղղափառութեան վրա*

*) *Մեղաց թողութեան թուղթը, անցեալ, ներկայ և ապառնի մեղքերի համար, ինչպէս նաև երդումից ազատ պահելն ու ապստամբեցնելը, հասարակ բաներ էին պապերի համար։*

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

Փետրվարի 20-ին

Մեր կողմերում թանդուլթեան հետ տարածված կարմրուկ և ծաղիկ տարափոխիկ հիւանդութիւնները բաւական զոհեր են տանում։ Զանազան գիւղերից անդադար լուրեր են հասնում Ղուբա, թէ կարմրուկը գիւղերում մեծ կոտորածներ է անում, թէ ծաղիկը շատ ծնողներին անմխիթար է թողնում։ Նոյն իսկ գիւղերը այցելող ֆելդշերը չը գիտէ ինչ խօսքերով բացատրէ թշուառների վիճակը։ Հիւանդութիւնը տարածվելով Ղուբայում, հէնց մեր աչքի առաջ մի քանի զոհեր էլ տարել է, և տանում է։ Այդ «մի քանի զոհեր» խօսքերը վերաբերվում են քաղաքիս մահմեդական և քրիստոնեայ ազգաբնակութեան, իսկ ինչ կը վերաբերի հրէաներին, նրանք կազմում են քաղաքի մի առանձին մասը, բաժանվելով քաղաքից «Ղուբա-չայ» ասված գետով. սրանք արդէն վաղուց սարսափի մէջ են, տալով յիշված հիւանդութիւններին եռապատիկ ու քառապատիկ զոհեր, չը նայելով իրանց փոքր թիւն համեմատած քաղաքիս միւս մասի բնակիչների հետ։ Այդպիսի անվախիթար երևոյթների պատճառը որոնելու է հրէաների տգիտութեան և անկանոն կենցաղավարութեան մէջ։ «Ջհուդլար» կամ «Ջհուդներ» անուանված քաղաքամասը իր կեղտոտ, ծուռ ու մուռ փողոցներով, փոքրիկ մութ, խոնաւ, գարշահոտ տներով, սատկած շներով, կատուներով, հաւերով և ուրիշ հազարաւոր աղտոտութիւններով՝ զզուանք, սարսափ և կարեկցութիւն է ծնեցնում կեանքի առողջապահական պայմանների հետ փոքր ի շատէ ծանօթ ամեն մի անձնաւորութեան մէջ։ Անցնելով քաղաքի այդ կղզիացած քաղաքամասից, մանաւանդ տարվայ շոր ժամանակ, մարդս ակամայ ստիպված է լինում քիթը բռնել տիրող դարշահոտութիւնից պահպանվելու, շատ անգամ ստիպված լինելով անտանելի աղտոտութիւնները կոխ տալով անցնել, չը գտնելով ուրիշ ճանապարհ։ Այդ բոլորը այդպէս լինելուց յետոյ, միթէ հասկանալի չէ որ այստեղ օդը թունաւորված պիտի համարել, երբ նա ընդունում է իր մէջ հազարաւոր աղտոտութիւնների լուծված մասնիկները, և միթէ զարմանալ է հարկաւոր, երբ հրէաները աւելի դունատ, դեղնած ու հիւանդոտ են լինում քան թէ իրանց դրացիները։ Եթէ աւելացնելու լինենք ասածներիս նաև այն հանգամանքը, որ նրանք չահամոլութիւնից կուրացած, ապրում են խմբված իրար վրա, շատ անգամ մի տնում ապրում են չորս հինգ ընտանիքներ, շատ անգամ մի փոքրիկ մութ ցեխէ խրճիթում իրար վրա ընկած են լինում տասը հոգի՝ մեծ փոքր, տղայ, աղջիկ, այն ժամանակ հասկանալի կը լինի հիւանդութիւնների այստեղ ստէպ տարածվելը և առատ հունձ ունենալը։ Չը պէտք է մոռանալ նմանապէս բուսականութեան կատարեալ բացակայութիւնը, որը մաքրելով թունաւորված օդը, կարող կը լիներ մասամբ թեթևացնել ազգաբնակութեան վիճակը։

Ցեղիս հրէաները, ինչպէս յայտուկ է այդ ազգին, շատ գործունեայ ու աշխատասէր ժողովուրդ են. նրանց թիւը հասնում է մինչև 8 հարիւր տուն, նրանք ապրում են, ինչպէս ասեցի, գետի միւս ափում բոլորն էլ միասին, քաղաքիս միւս բնակիչների հետ համարձակութիւն չունենալով ապրելու, նրանք բոլորն էլ համարեա զբաղված են վաճառականութեամբ, արտահանելով Ռուսաստան, Բաթում, Պարսկաստան և Եւրոպա զանազան ապրանքներ՝ ցորեն, բրինձ, դարի, ապրեչում, բոժոժ, խալիչաներ, փալասներ։ Նրանք հաւաքում են գիւղերից՝ աղուէսի, նապաստակի, սկիւռի, վայրենի կատուի և ուրիշ կենդանիների մորթեր, խնձորից, տանձից պատրաստած կախան և այլն, և այլն։ Իսկ իրանք ստանում են մանուֆակտուրային ապրանքներ Ռուսաստանից, գլխաւորապէս Նիժնիի տօնավաճառից, կամ հէնց տեղիս մի քանի թուրք կամ հայ վաճառականներից պարտք են վերցնում ու աշնանը վերադարձնում են փողի փոխարէն այն բոլորը, ինչ որ հաւաքել են գիւղերում։ Հրէաների կանայք անդամ իրանք աշխատում են, խմբերով շրջելով քաղաքում և զանազան տնային գործերով զբաղվելով։ Այսն օր երեկոյեան կարելի է տեսնել այդ կին մշակներին տուն վերադառնալիս. նրանք ստիպված են լինում գետը ոտով անցնելու։ Մարդիկ մեծ մասամբ գործ ունեն գիւղացիների հետ. նրանք խուրջինների մէջ ածած զանազան մանր մունր ապրանքներ, չթեր, որ մեծ մասամբ ապառիկ են վերցրել, պտտում են շրջակայ գիւղերը, ծախում իրանց ապրանքները՝ ցորենի, դարու, փոխարէն, որ հաւաքում են աշնանը, ման գալով սունի թուրքերի, չիա թուրքերի, լեզգիների, թաթերի գիւղերը։ Խաբելով միամիտ գիւղացիներին, շատ անգամ ապրանքներ քառապատիկ գներով ծախելով, հրէաները զրկում են իրանց դէմ այդ վերջինների աւելութիւնը, որ միացած տգէտ ժողովրդի մոլեռանդութեան հետ, դժուարացնում է հրէաներին ազատ շրջելը, և վտանգի մէջ է պահում նրանց կեանքը։ Դեռ սրանից մի քանի տարի առաջ, ինչպէս ասում են տեղացիները, մի թուրք աւազակ երևան ելաւ, որը իրան նպատակ էր դրել որքան կարող է շատ հրէաներ կոտորել. նա իր արիւնարբու խմբի հետ միասին մաւորապէս թելադրվելով լատին քարոզիչներից, և խրախուսված ժամանակի ներքին, քաղաքական ու կրօնական անհաստատ վիճակից և շփոթութիւններից, իրանց կրօնափոխութեան գործը այնքան առաջ տարան, որ կատարեալապէս խառնակեցին հայ ազգը։

Հայ-ունիթոռների նպատակը, ի հարկէ, հայ-ազգի հոգու փրկութեան կամ լուսաւորութեան գործը չէր, որովհետև, եթէ յատկապէս հայ ազգին բարիք լինելու մտքով լինէր, նոցա համար բոլորովին հարկաւոր չէր եկեղեցական ուխտը դրժել, հանդերձները փոխել լատինական ձևով, լատինական կրօնաւորների միաբանութեան կանոնադրութիւնը ընդունել, և կամ նպատակ ունենալ ամբողջ հայ եկեղեցին յեղաշրջել, այլ՝ նախ աւելի նպատակայարմար կը համարէին մնալ հայ եկեղեցու մէջ, և արդէն սրբագործած մայրենի եկեղեցու վարդապետութեան համեմատ, մեր միւս հայրապետների պէս, ժողովուրդը առողջ քարոզութեամբ լուսաւորել և զարգացնել, քրիստոնէական խաղաղ, համբերող և անյիշաչար կրօնի համաձայն։

Բայց հայ-ունիթոռները բոլորովին հակառակ ուղղութիւն բռնեցին, որոնց նպատակը պարզապէս պապականութիւն տարածելն էր հայ ազգի մէջ, առանց ընտրութեան եղանակի և միջոցների և բոլորովին հակա-քրիստոնէական գործողութեամբ, որոնցից պարզապէս երևում է, որ հայ-ունիթոռները լատին կապուցին կրօնաւորներ. ձեռքում դառել էին մի անյարդ գործիք, հայոց եկեղեցին քանդելու և պապականութիւնը տարածելու համար, ինչպէս յայտնի է նոցա կատարած գործերից։

Գուցէ նոցա գործը աջողութիւն գտնէր, եթէ չափաւորելու լինէին իրանց քարոզելու եղանակը, և իրանց նպատակին հասնելու համար այնպիսի միջոցների չը դիմէին, որոնք ոչ թէ միայն Հռոմի եկեղեցուն, այլ և ուղղակի քրիստոնէական վարդապետութեան արատ կարող էին լինել և անվայել։ Եւ իրաւ, այդ ազգավաճառ, բանսարկու, կրօնադրուժ, և հակաքրիստոնէական կեանք վարող հայ-ունիթոռները, մի քանի տասնեակ տարիներ շարունակ այնպիսի խռովութիւններ և աղմուկ հանեցին ամբողջ ազգի մէջ, որի նմանը երբէք տեսնված չէր մեր պատմութեան մէջ։

Հայ-ունիթոռները այնպիսի սուտ զրպարտութիւններ և դայթակղեցուցիչ լուրեր էին տարածում հայ ազգի և եկեղեցու վերաբերեալ (117 գլուխ ամբաստանութեան թուղթ ներկայացնելով Հռոմին), որ անկարելի էր եթէ ազգի մէջ նշանաւոր աղմուկ և խռովութիւն չը պատճառէր, քանի որ նոքա, առանց պատկառելու քարոզում էին «կրկին մկրտել հայերին, և հայոց եկեղեցին մոլորեալ և անհաւատ համարել»։ Մեր պատմաբան հայր Միքայէլ վարդ. Չամչեան, որ ակամայից շատ անգամ ջատագով է հանդիսանում պապականութեան տարածմանը հայ ազգի մէջ, չէ կարողացել առանց խղճահարվելու չը պախարակել այդ հայ-ունիթոռների կատարած գործերն իր պատմութեան մէջ, ասելով՝ «Յարեան յայնժամ երկու ոմանք իբր նախանձաւորք՝ արբանեակք չարի, որոց մին կոչիւր Ներսէս Պաղոն եպիսկոպոս Որմիոյ, և միւսն Սիմէոն բէկ եպիսկոպոս Կարնոյ, որք միաբանեալ ընդ իւրեանս զարս քանի մի, շրջէին հանդերձ նոքօք այսր և անդր, և քարոզէին, թէ՝ հարկ է կրկին մկրտել և դրոշմել զամենայն հայս լատինական ծիսիւք և վերստին ձեռնադրել զքահանայս նոցա, և տալ պատարագել լատին բարբառով և արարողութեամբ»։

«Նոյնպէս փոխել և զամենայն կարգ պահոց և այլոց սովորութեանց, զի այսու կարասցեն միաբանիլ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, և ասէին, ըստ գրելոյ Մխիթարայ կաթողիկոսի, թէ մկրտութիւն հայոց է երկրայելի, և պատարագն հայոց ոչ է ճշմարիտ պատարագ»։ (Չամչեան ժողով. հատ. իե. եր. 1250)։

Բնական է, որ հայերը չէին կարող տանել այդպիսի լիբը զրպարտութիւններ և յանդուգն մեղադրանքներ իրանց եկեղեցու հակառակորդների կողմից, երբ պարզապէս տեսան, որ քրիստոնէական ներողամտութեան համաձայն մի քանի անդամ այդ հայ-ունիթոռներին խրատելուց, զգուշացնելուց յետոյ, երբ նոքա հայոց հեղութիւնը թուլութեան նշան էին համարում, սկսեցին աւելի յանդուգն եղանակով խռովել և պղտորել հայ ազգը։ Մայրենի եկեղեցու հաւատարիմ մասը, որի առաջնորդ էր հռչակաւոր Գրիգոր Տաթեացին, սկսեց հաւասար եղանակով վարվել հայ-ունիթոռների հետ։ «Եւ ի խմբել սոցա անդ՝ արձակեցին արս յաջողս և զօրաւորս յամենայն կողմանս, և ծախեցին ինչս բազումս ի դրանս այլազգեաց, ըստ Մխիթարայ, աւելի քան զհարիւր վաթսուն հազար դահեկանս, և հաղիւ ուրեմն զբռամբ ածեալ զաչակերտս Սարգսի և զոմանս Ունիթոռաց՝ բերին յԱտեան, և զատեալ զնոսա հրապարակաւ՝ զոմանս բրածեծ արարին իբրև զկրկնակնունքս և ապստամբս եկեղեցւոյ, զոմանս զներս և զմօրուսս փետեալ անյարդեցին, և զայլս այլով օրինակաւ չարչարեցին, և բաղումս ի բանտ արգելին երկաթի շղթայիւք։ (Չամչեան պատմ. հայոց, հատոր 3, գիրք զ. գլխ. գ. եր. 448)։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, փետրվարի 26-ին, Թագաւոր Կայսրի ծննդեան տօնի առիթով քաղաքը զարդարված էր դրօշակներով, և բոլոր եկեղեցիներում կատարվեցան մաղթանքներ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Ի նկատի ունենալով, որ թուրք երեխաները չեն ուսանում ոչ մի մասնագիտական միջնակարգ դպրոցում, ներկայումս կազմված է նախագիծ, թուրքերի համար առանձին մասնագիտական դպրոցներ հիմնելու վերաբերութեամբ։ Այդ դպրոցներում դասընթացը և դասաւանդութեան եղանակները համապատասխան կը լինեն թուրքերի մտաւոր ոյժերին։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կարճ ժամանակից յետոյ պէտք է սկսվին Երևանում քաղաքային ընտրութիւնները. նոր ձայնաւորների ընտրութիւն պէտք է լինի, և պէտք է ընտրվեն նոր վարչութիւն և նոր քաղաքագլուխ։ Քաղաքի հասարակութեան զանազան շրջաններում այժմեանից արդէն հետաքրքրվում են այդ հարցով։ Ցանկալի է, ի հարկէ, որ այդ հետաքրքրութիւնը ժողովրդի մէջ առաջ բերէ գիտակցաբար գործելու ձգտում, որով միայն կարելի է քաղաքային աջող ընտրութիւններ կատարել. իսկ թէ որքան մեծ նշանակութիւն ունի ընդհանրապէս քաղաքի շահերի համար աջող ընտրութիւնը,—այդ, անկասկած, բացատրութեան կարօտ չէ»։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թէ քաղաքային և թէ մասնաւոր հիւանդանոցներում շատ աչքի է ընկնում այն անճշդութիւնը, որ գործ են դնում բժշկները ժամանակի վերաբերութեամբ։ Յայտարարվում է, որ այս ինչ բժիշկը հիւանդանոցում հիւանդներին ընդունում է դիցուք ժամի 10-ից մինչև 11-ը, կամ թէ ժամը 12-ից մինչև 1-ը, բայց բոլոր այցելողները ստիպված են համարեա ամբողջ ժամերով սպասել, որովհետև այդ բժիշկներից շատերը սովորաբար կէս կամ մի ամբողջ ժամ ուշ են դալիս նշանակած ժամանակից։ Դա ունենում է և մի աւելի վատ հետեւանք. բժշկի ուշ դալու պատճառով այցելուները մեծ թիւով հաւաքվում և սպասում են, և բուժիչին էլ շատ շտապով է նայում հիւանդներին, որովհետև որոշեալ ժամը լրանալուց յետոյ նա պէտք է գնայ ուրիշ այցելութիւններ անելու մասնաւոր հիւանդներին։ Իսկ թէ որքան վատ հետեւանքներ կարող է ունենալ այն բանը, որ բժիշկները ուշադրութեամբ չեն ընդունում իրանց դիմող հիւանդներին,—այդ արդէն ամենքին հասկանալի է։

—

Երկու տարի առաջ Թիֆլիսում մեռաւ այստեղ յայտնի երդուեալ հաւատարմատարներից մէկը՝ Գ. Մէլէգի, թողնելով ընտանիքը առանց ապրուստի միջոցների։ Մէլէգիի մահուանից յետոյ, տեղացի երդուեալ և մասնաւոր հաւատարմատարները իրանց մէջ համաձայնութիւն կայացրին և մինչև անդամ գրաւոր պայման կապեցին, որ նրանցից իւրաքանչիւրը տարեկան 20 բուբլի նպաստ տան Մէլէգիի ընտանիքին, մինչև որ նրա որդիքը չափահաս կը դառնան։ Այդ, ի հարկէ, գովասանքի արժանի մի վարմունք էր փաստաբանների կողմից, որոնց համար դժուար էլ չէր իրանց առատ եկամուտներից տարեկան 20 բուբլի տալ՝ հանդուցեալ համակրելի պաշտօնակցի ընտանիքին օգնելու համար։ Բայց, տարաբաղդաբար, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, այդպիսի փառաւոր խոստմունք տուող փաստաբաններից մի քանիսը այժմ հրաժարվում են իրանց խոստմունքը կատարելուց և չեն ուզում տալ իրանց խոստացած դումարը։ Ի՞նչ կասկած որ այդպիսի վարմունք մի անհերելի ցոյց է այդ պարոնների կողմից։ Ո՞վ էր խնդրում դրանց խոստանալ եթէ չը պէտք է կատարէին իրանց խոստմունքը։ Եւ ահա այժմ, երբ Մէլէգիի ընտանիքը իրան մասամբ ապահովված էր համարում, մեծ-մեծ խոստումներ անող փաստաբանները, որ հանդուցեալ պաշտօնակցի դագաղի վրա ամեն տեսակ պատրաստականութիւն էին յայտնում,—հրաժարվում են իրանց խօսքերից, հրաժարվելով լատին քարոզիչներից, և խրախուսված ժամանակի ներքին, քաղաքական ու կրօնական անհաստատ վիճակից և շփոթութիւններից, իրանց կրօնափոխութեան գործը այնքան առաջ տարան, որ կատարեալապէս խառնակեցին հայ ազգը։

Հայ-ունիթոռների նպատակը, ի հարկէ, հայ-ազգի հոգու փրկութեան կամ լուսաւորութեան գործը չէր, որովհետև, եթէ յատկապէս հայ ազգին բարիք լինելու մտքով լինէր, նոցա համար բոլորովին հարկաւոր չէր եկեղեցական ուխտը դրժել, հանդերձները փոխել լատինական ձևով, լատինական կրօնաւորների միաբանութեան կանոնադրութիւնը ընդունել, և կամ նպատակ ունենալ ամբողջ հայ եկեղեցին յեղաշրջել, այլ՝ նախ աւելի նպատակայարմար կը համարէին մնալ հայ եկեղեցու մէջ, և արդէն սրբագործած մայրենի եկեղեցու վարդապետութեան համեմատ, մեր միւս հայրապետների պէս, ժողովուրդը առողջ քարոզութեամբ լուսաւորել և զարգացնել, քրիստոնէական խաղաղ, համբերող և անյիշաչար կրօնի համաձայն։

Բայց հայ-ունիթոռները բոլորովին հակառակ ուղղութիւն բռնեցին, որոնց նպատակը պարզապէս պապականութիւն տարածելն էր հայ ազգի մէջ, առանց ընտրութեան եղանակի և միջոցների և բոլորովին հակա-քրիստոնէական գործողութեամբ, որոնցից պարզապէս երևում է, որ հայ-ունիթոռները լատին կապուցին կրօնաւորներ. ձեռքում դառել էին մի անյարդ գործիք, հայոց եկեղեցին քանդելու և պապականութիւնը տարածելու համար, ինչպէս յայտնի է նոցա կատարած գործերից։

Գուցէ նոցա գործը աջողութիւն գտնէր, եթէ չափաւորելու լինէին իրանց քարոզելու եղանակը, և իրանց նպատակին հասնելու համար այնպիսի միջոցների չը դիմէին, որոնք ոչ թէ միայն Հռոմի եկեղեցուն, այլ և ուղղակի քրիստոնէական վարդապետութեան արատ կարող էին լինել և անվայել։ Եւ իրաւ, այդ ազգավաճառ, բանսարկու, կրօնադրուժ, և հակաքրիստոնէական կեանք վարող հայ-ունիթոռները, մի քանի տասնեակ տարիներ շարունակ այնպիսի խռովութիւններ և աղմուկ հանեցին ամբողջ ազգի մէջ, որի նմանը երբէք տեսնված չէր մեր պատմութեան մէջ։

Հայ-ունիթոռները այնպիսի սուտ զրպարտութիւններ և դայթակղեցուցիչ լուրեր էին տարածում հայ ազգի և եկեղեցու վերաբերեալ (117 գլուխ ամբաստանութեան թուղթ ներկայացնելով Հռոմին), որ անկարելի էր եթէ ազգի մէջ նշանաւոր աղմուկ և խռովութիւն չը պատճառէր, քանի որ նոքա, առանց պատկառելու քարոզում էին «կրկին մկրտել հայերին, և հայոց եկեղեցին մոլորեալ և անհաւատ համարել»։ Մեր պատմաբան հայր Միքայէլ վարդ. Չամչեան, որ ակամայից շատ անդամ ջատագով է հանդիսանում պապականութեան տարածմանը հայ ազգի մէջ, չէ կարողացել առանց խղճահարվելու չը պախարակել այդ հայ-ունիթոռների կատարած գործերն իր պատմութեան մէջ, ասելով՝ «Յարեան յայնժամ երկու ոմանք իբր նախանձաւորք՝ արբանեակք չարի, որոց մին կոչիւր Ներսէս Պաղոն եպիսկոպոս Որմիոյ, և միւսն Սիմէոն բէկ եպիսկոպոս Կարնոյ, որք միաբանեալ ընդ իւրեանս զարս քանի մի, շրջէին հանդերձ նոքօք այսր և անդր, և քարոզէին, թէ՝ հարկ է կրկին մկրտել և դրոշմել զամենայն հայս լատինական ծիսիւք և վերստին ձեռնադրել զքահանայս նոցա, և տալ պատարագել լատին բարբառով և արարողութեամբ»։

«Նոյնպէս փոխել և զամենայն կարգ պահոց և այլոց սովորութեանց, զի այսու կարասցեն միաբանիլ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, և ասէին, ըստ գրելոյ Մխիթարայ կաթողիկոսի, թէ մկրտութիւն հայոց է երկրայելի, և պատարագն հայոց ոչ է ճշմարիտ պատարագ»։ (Չամչեան ժողով. հատ. իե. եր. 1250)։

Բնական է, որ հայերը չէին կարող տանել այդպիսի լիբը զրպարտութիւններ և յանդուգն մեղադրանքներ իրանց եկեղեցու հակառակորդների կողմից, երբ պարզապէս տեսան, որ քրիստոնէական ներողամտութեան համաձայն մի քանի անդամ այդ հայ-ունիթոռներին խրատելուց, զգուշացնելուց յետոյ, երբ նոքա հայոց հեղութիւնը թուլութեան նշան էին համարում, սկսեցին աւելի յանդուգն եղանակով խռովել և պղտորել հայ ազգը։ Մայրենի եկեղեցու հաւատարիմ մասը, որի առաջնորդ էր հռչակաւոր Գրիգոր Տաթեացին, սկսեց հաւասար եղանակով վարվել հայ-ունիթոռների հետ։ «Եւ ի խմբել սոցա անդ՝ արձակեցին արս յաջողս և զօրաւորս յամենայն կողմանս, և ծախեցին ինչս բազումս ի դրանս այլազգեաց, ըստ Մխիթարայ, աւելի քան զհարիւր վաթսուն հազար դահեկանս, և հաղիւ ուրեմն զբռամբ ածեալ զաչակերտս Սարգսի և զոմանս Ունիթոռաց՝ բերին յԱտեան, և զատեալ զնոսա հրապարակաւ՝ զոմանս բրածեծ արարին իբրև զկրկնակնունքս և ապստամբս եկեղեցւոյ, զոմանս զներս և զմօրուսս փետեալ անյարգեցին, և զայլս այլով օրինակաւ չարչարեցին, և բաղումս ի բանտ արգելին երկաթի շղթայիւք։ (Չամչեան պատմ. հայոց, հատոր 3, գիրք զ. գլխ. գ. եր. 448)։

(Կը շարունակվի)

ժարվում են տարեկան 20 բուբլի տալուց։

—

Յօգուտ Զէյթունի հրկիզեալների, կալուածական բանկի թատրոնում, երեքշաբթի օր, մարտի 1-ին սիրողները կը տան մի ներկայացում։ Կը խաղացվի Կրիլովի «Գերդասան» պիէսան։ Ներկայացումից յետոյ կը լինեն կենդանի պատկերներ՝ «Զէյթունի հրդեհից» վերցրած և խմբական երգեցողութիւն։

—

Զորս օր է արդէն որ մեր բոլոր փօստային յարաբերութիւնները, Կովկասեան սարերի վրա եկած մեծ ձիւնների պատճառով, կատարելապէս կտրված են Ռուսաստանի հետ։ Ճանապարհները մաքրվում են և այսօր կամ վաղը փօստի ենք սպասում։

—

Կովկասեան սարերի վրա եկած մեծ ձիւնը աղդում է և Թիֆլիսի եղանակի վրա. քանի մի օր է որ Թիֆլիսում եկանակը, թէև պարզ է, բայց բաւական ցրտել է և անդադար փչում է հիւսիսային սառն քամի։

—

Չորեքշաբթի, փետրվարի 24-ին, քաղաքային թատրոնում առաջին անդամ այստեղի բեմի վրա ներկայացվեցաւ ռուս հեղինակ Սերովի «Вражья Сила» օպերան։ Ռուսական բեպերտուարի ոչ մի օպերայի մէջ, կարելի է ասել, չէ նկատվում այնքան ռուսական ոգի, ինչպէս «Вражья Сила»-ի մէջ, մինչև անդամ ի վնաս զեղարուեստական պահանջների։ Սերով առնում է որ և իցէ ժողովրդական եղանակ, և առանց ապնուացնելու, կամ նրան իբր թ և մա ընդունելով զարդացնելու, մտցնում է ամբողջովին օպերայի մէջ, և ի հարկէ, շատ էլ դուրեկան չէ լինում լսելու այդպիսի անմշակ կտորներ։ Օպերայի մէջ շատ քիչ կտորներ կան, որոնց չինուածքը դեղեցիկ լինէր և ներդաշնակ, և որոնք ախորժանք պատճառէին լսողներին. այդպիսի կտորներից են առաջին գործողութեան մէջ Դաշայի արիան, երկրորդ գործողութեան ֆինալը և այլն։ Օպերայի բովանդակութիւնը առնված է Օստրովսկու դրամների մէկից, բայց չէ կարելի ասել, որ լիբրետիստը օգտվել է նրանից ինչպէս հարկն է։ Գործող անձինքներից շատերը նկարագրված են շատ մութ կերպով և գործողութիւնների մէջ չէ նկատվում որոշ կապ։ Մի բան որ հեղինակը նկարագրել է շատ պարզ կերպով, դա հարբեցողութիւնն է. բեմի վրայից հարբած մարդիկ դրեթէ չեն հեռանում, իսկ չորրորդ գործողութեան ժամանակ բեմի վրա բոլոր անձինքը հարբած են։ Օպերան, ինչպէս կարելի էր եղրակացնել առաջին ներկայացումից, ընդհանրապէս դուր չեկաւ Թիֆլիսի հասարակութեանը, ծափահարութիւններ դրեթէ չէին լսվում, չը նայած որ երգիչները բաւական լաւ էին կատարում իրանց դերերը։

—

Բաֆֆիի պատմական «Սամուէլ» վէպը, որի նիւթը վերցրած է հայոց պատմութեան չորրորդ դարու անցքերից, այս օրերս լոյս տեսաւ առանձին գրքով. այդ բաւական մեծ գրքի մէջ ամփոփված են վէպի առաջին, երկրորդ և երրորդ մասերը, չորրորդ և վերջին մասը լոյս կը տեսնի ներկայ թուականի ընթացքում։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանի փոխարէն այստեղի յաջորդ է նշանակվել Յուսիկ վարդապետ Մովսիսեան, որը այս օրերս պէտք է գայ այստեղ։»

—

Լսում ենք, որ մի քանի օր առաջ տեղեկութիւն է ստացված Թիֆլիսում, որ դալ թատրոնական սեզոնին նորից իրաւունք է տրված Թիֆլիսում օպերա ունենալ ներկայ դիրեկցիայի կառավարութեան տակ։ Գլխաւոր կառավարիչ նշանակված է պ. Պրիանիշնիկով, որին յանձնված է և խմբի կազմակերպութիւնը։ Առ այժմ միայն հաստատ է, որ օրկէստրի կառավարիչ կը մնայ պ. Պրիբիկ, իսկ ներկայ երգիչներից և երգչուհիներից շատերի հետ սկված են բանակցութիւններ, և այս քանի օրերս կը որոշվի թէ նրանցից ով կը մնայ։ Ներկայացումներ կը լինեն ոչ թէ ամեն օր, այլ շաբաթը չորս անդամ։ Դիրեկցիան վճռել է խնայողութիւն անել, քանի որ ներկայ սեզօնում բաւական վնաս է կրել մեծ ծախսերի պատճառով։

—

Փետրվարի 25-ին Ի. Փիթոյեվի թատրոնական դահլիճում տրվեցաւ մի երաժշտական-դրամատիական երեկոյ։ Դահլիճը կատարելապէս լի էր, և մուտքը պէտք է յատկացվի Թիֆլիսում բացվելի ժողովրդական գրադարանին և կիրակեայ դպրոցին։

—

«Մշակի» խմբագրութեան մէջ յօգուտ Զէյթունի հրկիզեալների եղած 363 ր. 56 կ. գումարը երէկ յանձնեցինք Թեմիս սրբազան առաջնորդին։ Յօգուտ Զէյթունի հրկիզեալների ասորագրութեան սկսվելու օրից մինչև այսօր «Մշակի» խմբագրութիւնը յանձնած է սրբազան առաջնորդին յիշեալ նպատակով հանգանակած՝ ընդամենը 3,194 բուբլի 96 կ. գումարը։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, որ այնտեղ օրից օր աւելի է զգացվում մի հմուտ և եռանդուն բժշկի կարեորութիւնը, քանի որ տեղական աղդաբնակութիւնը ղդալով բժշկական օգնութեան դիմելու անհրաժեշտութիւնը, քաղաքի մէջ չէ գտնում մի օրինաւոր բժշկի, որը յատկապէս քաղաքացիների համար լինէր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Պոլսի հայ-բողոքականների ազդապետի ընտրութեան առիթով այնտեղի լրագիրները հաղորդում են հետևեալը. «Բողոքականաց ազդապետի վերջին ընտրութիւնը չէր ճանչցուած հասարակութեան մէկ մասէն և նոյն իսկ կառավարութենէն, որ իբրև օրինաւորապէս հաստատեալ մարմին չէր ճանչնար այդ ընտրութիւնը կատարող «երեսփոխանական ժողովը»։ Կառավարութիւնը դիտել կուտար նաև թէ երեք ընտրելիք պէտք է ներկայացնեն իրեն, և ինք անոնցմէ մին նշանակէ ազդապետ, և թէ այս ընտրելիք պէտք է անուանուին բողոքական հասարակութեան «երեսփոխաց ժողովի» մը կողմէ։ Ըստ այսմ, կառավարութիւնն հրամայած էր որ ընտրութեան գործն երեսփոխաց ժողովի մը յանձնուի։ Հետևապէս, 40—50 հայ-բողոքականք հաւաքեցան, և նախ վեց ընտրելեաց ցուցակ մը պատրաստելով, յետոյ քուէից առաւելութեամբ վերջնական ընտրելի հռչակեցան Յակոբ էֆէնդի Պոյաճեան և Մինասեան Գաբրիել էֆէնդի։ Անոնց անունները տեղեկագրով մը պիտի ներկայացուին կառավարութեան, որ անոնցմէ մին պիտի անուանէ ազդապետ։ Կերևի թէ ասկէ առաջ ալ այսպէս եղած է, և հասարակութեան ձեռքը գտնուած հրովարտակին ընտրական մասն այնպէս խմբագրուած է, որ կայսերական կառավարութիւն իրաւունք ունի իրեն վերապահելու վճռական ձայնն ազդապետի ընտրութեան մէջ»։

Փոքր-Ասիայում ապրող հայերի տխուր դրութեան վրա այժմ յուսաց հոգևորականութիւնն է հրաւիրում հայոց պատրիարքարանի ուշադրութիւնը. իբրև ապացոյց մենք կը բաւականանք առաջ բերելով հետևեալը. «Սինոպի յունաց առաջնորդական փոխանորդը մի նամակ ուղղելով Ազգ. Պատրիարքարան, ուշադրութիւն հրաւիրած է տեղւոյն և շրջակայից հայերու անհովիւ և անկերպարան վիճակի վրա։ Ցոյն եկեղեցականն աւելացնում է թէ՝ թէև Ամասիոյ հայոց առաջնորդարանին հաղորդած է այս տխուր վիճակը, այդ ձեռնարկ որ և է արդիւնք ունեցած չէ և թէ ինք հնարաւորն ի գործ կը դնէ ըստ կարելւոյն պաշտպանելու համար այդ անհովիւ ժողովուրդը։ Կրօնական ժողովն նկատողութեան առնելով այս կիրն, որոշեց Ամասիոյ առաջնորդական տեղապահին յանձնարարել, որ հարկ եղածը ի գործ դնէ»։

Ատաբազարից հեռագրում են Պոլսի լրագիրներին, որ Սաքարեա գետը (որ թափվում է Սև ծովը) յորդանալով, ողողել է Ատաբազարի մեծ մասը։ Թշուառութիւնը մեծ է։ Մի քանի միջոցներ են ձեռք առնված աղէտի առաջն առնելու համար։

Մաղնիսայի մէջ Շահպազլեան վարդապետի շնորհիւ անկարգութիւնները և խառնակութիւնները շարունակվում են։ Շահպազլեան վարդապետի յարուցած խառնակութիւնների պատճառները արդէն յայտնի են։ Ահա թէ ինչ է գրում Զմիւռնիայի «Réforme» լրագիրը Մաղնիսայի մէջ ծագած վերջին խառնակութիւնների մասին.

«Փետրվարի 19-ին, կիրակի օր, ծանր անկարգութիւններ պատահեցան Մաղնիսայի հայոց թաղի մէջ։ Կրօնական վէճերը, այդ թաղի մէջ, ծընունդ տուած են երկու կուսակցութեանց, որք երկար ժամանակից ի վեր հակառակութիւն կը տածեն միմեանց դէմ։ Ժամերգութիւնից յետոյ մի խումբ մոլեռանդներ միմեանց վրա յարձակվեցան, ձեռքերի հանդիպած նիւթերը գործածելով։ Ասոր հետևանքը եղաւ սոսկալի մի կռիւ, որի մէջ տասի չափ անձինք վիրաւորվեցին։ Պոլսի հայոց Պատրիարքը յանձնարարել է Զմիւռնիայի առաջնորդական տեղապահին՝ Շահպազլեանին անմիջապէս Պոլիս ուղարկել։

Պոլսի «Արևելք» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Այս օրերս մեր հիւր վրացի զիմնական պ. Դմիտրի Բագրատէ, ընկերակցութեամբ Աբդուլի նախկին գաւառապետ Մեպիսովի և պ. Գրիգոր Նիկողոսեանի, այցելեց Ղալաթիոյ Ազգ. կենտրոնական վարժարանը։ Մինաս Չերազ արժանավայել մեծարանօք ընդունեց այցելուներն և առաջնորդեց դասարանները, գրադարանը, բնագիտական և բնալուծական գործեաց սենեակները։ Պ. Բագրատէ մասնաւոր ուշադրութեամբ քննելով ամեն բան, մեծ հետաքրքրութեամբ դնեց նաև Ներսէս Պատրիարքի նուիրած գրադարանն, որոյ մէջ աչքէ անցուց հայոց պատմութեան վերաբերեալ հայերէն և ֆրանսերէն գրքերը»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պետութիւնների բանակցութիւնները բոլգարական հարցի առիթով դեռ ևս վերջնական եզրակացութեան չեն հասել, և առհասարակ վերջին օրերում մի նշանաւոր փոփոխութիւն չէ եղած։

—Վիէննայի համալսարանի խորհուրդը յանդիմանութիւն յայտնեց այդ համալսարանի ռուս ուսանողներին, որոնք,—թէև մասնաւոր կերպով,—համակրութիւն էին յայտնել ռուսաց համալսարանների ուսանողներին՝ վերջին համալսարանական խառնակութիւնների պատճառով։

—Պոլսից գրում են, որ Դամասկոսի անցքը ոչինչ ծանր հետևանք չունեցաւ, և ֆրանսիական դեսպանը արդէն բաւարարութիւն ստացաւ թիւրքաց իշխանութիւնից տուած բացատրութիւններով։

—Վիէննայից հաղորդում են, որ իբրև թէ աւստրիական քաղաքականութիւնը աջողութիւն է գտնում Բուխարեստում, և բուսինական կառավարութիւնը մօտիկ յարաբերութիւններ է ըսկսել Վիէննայի հետ։

—Եւրոպական երկիրների անկախ մամուլը համարեա միաբերան հեղնութեամբ է վերաբերվում դէպի իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը, որով նա մի կողմից պատերազմական չը տեսնված պատրաստութիւններ է անում, իսկ միւս կողմից իր պերճախօս ճառերով աշխատում է հաւատացնել Եւրոպային, որ խաղաղութիւնը չի խախտվի։

—Բերլինում տիրապետող անհանգստութիւնը թագաժառանգ իշխանի հիւանդութեան պատճառով, աւելի է սաստկացել, քանի որ Վիլհելմ կայսրը ևս հիւանդացել է և այն էլ ոչ թեթև կերպով։

—«Արևելքի» մէջ կարդում ենք. «Կրօնական ժողովը նկատողութեան առաւ Ճավայի ազգայնոց մէկ գիրն, որով ուսեալ և բանիբուն վարդապետ մը կը խնդրէին իբրև հոգևոր հովիւ, և նկատելով որ այդ տեղն Արարատեան Մայր Աթոռոյ հովուութեան կը վերաբերի, որոշեց ամենայն Հայոց Վ.Հ. Հայրապետի ուշադրութեան յանձնել յիշեալ խնդիրը»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, փետրվարի 27-ին Թիֆլիսի Կրուժօկում պէտք է լինի «չթաղդեստ պարահանդէս»։ Այդ «չթաղդեստ» պարահանդէսը օրվայ չարիք է դարձել արդէն մի ամսից ի վեր Թիֆլիսի իգական սեռի մի որոշ շրջանի համար։ Մի ամիս է արդէն, որ թէ չիթ ծախող վաճառականները և թէ մոդային դերձակուհիները հանգստութիւն չունեն խստապահանջ տիկիններից և օրիորդներից, որոնցից իւրաքանչիւրը կամենում է Կրուժօկի դահլիճներում ապշեցնել միւսներին իր զգեստի տարօրինակութեամբ։ Բայց պէտք է նկատել, որ տարօրինակութիւնը շատ թանդ է նստում իրանց կանանց բաղձանքը կատարող ամուսիններին, որոնք այդ պարահանդէսի շնորհով շատ փողեր հանեցին իրանց գուցէ և ոչ շատ լի դրպաններից, թէև պարահանդէսը մետաքսազգեստ չը պէտք է լինի, այլ չթաղդեստ։ Սակայն այդ չը-թաղդեստ պարահանդէսի նշանաւոր լինելը միայն ծախսի մէջ չէ, այլ այն ուշադրութեան մէջ, որով Թիֆլիսի իգական սեռը վերաբերվում է դէպի նա։ Գուցէ այս մի ամսում Թիֆլիսի կանայք և օրիորդներ աւելի շատ խօսեցին այսօր լինելի պարահանդէսի մասին, քան թէ հայրենասէր ֆրանսուհիները խօսեցած կը լինեն Բիսմարկի ճառի մասին։ Մի խօսքով չթաղդեստ պարահանդէսի խնդիրն է այժմ Թիֆլիսի իգական սեռի թէ քաղաքական, թէ հասարակական և թէ ընտանեկան խորհրդակցութիւնների միակ նիւթը։

* * *

Ծաղիկ պատուաստելու օգտակար սովորութիւնը տարածվում է և Թիւրքիայում։ Նորերումս օսմանեան կայսրութեան պետը, Սուլթանը, հրատարակեց մի հրամանագիր, որով պարտաւորեցուցիչ է դարձնում ծաղկի պատուաստելը, թէ երեխաների և թէ այն հասակաւորների համար, որոնց ծաղիկը չէ պատուաստած։

* * *

Լօնդօնում հրատարակվող «Graphic» լրագրի խմբագրութիւնը իր խմբագրատան մէջ կազմել է մի արտասովոր ցուցահանդէս։ Ցուցահանդէսի մէջ հաւաքված են ամբողջ Անդլիայի երևելի նկարիչների այն բոլոր նկարները, որոնք պատկերացնում են Շեկսպիրի հերոսուհիներին։ Դա անդլիացոց դէպի իրանց հանճարեղ գրողը ունեցած արտասովոր սիրոյ մի նոր նշանն է։

* * *

Ամերիկայում նորերումս տեղի ունեցած սարսափելի փոթորիկները մեծ վնասներ են պատճառել։ Ի միջի այլոց Վէրնօն քաղաքը մի քանի րօպէում անհետացաւ աշխարհի երեսից՝ այդ փոթորիկների շնորհով։ Ցները քանդվում և թափվում էին այնպէս հեշտութեամբ, կարծէք թղթից լինէին չինած. շատ մարդիկ մնացին աւերակների տակ։ Վիրաւորվածների թիւը 600-ի է հասնում։ Կենդանի մնացած մարդիկ առանց ապաստան ունենալու՝ ահագին նեղութեան մէջ ընկան ցրտից և քաղցից։ Քաղաքի հիւանդանոցը այրվեցաւ. բանտը, շատ եկեղեցիներ և շատ հիւանդանոցներ աւերվեցան։

* * *

Ամերիկայի Միացեալ Նահանգների նախկին նախագահ Գրանտի յիշատակին շուտով մի փառաւոր արձան պէտք է կանգնեցվի Նիւ-Եորկում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 փետրվարի։ Պետերբուրգի դուման մերժեց բնակարանների տուրքը։

ԲԵՐԼԻՆ, 24 փետրվարի։ Վիլհելմ կայսրի առողջութիւնը վտանգաւոր է. պրինց Վիլհելմ և իշխան Բիսմարկ մի քանի ժամ առանց հեռանալու պալատումն էին։

ՎԻԷՆՆԱ, 24 փետրվարի։ Պրինց Կօբուրգի իշխանութեան ապօրինութեան յայտարարելը այստեղի հասարակութեան և մամուլի վրա ծանր տպաւորութիւն է թողել։ Լրագիրների խօսքերին նայելով, Աւստրիան բոլորովին չահ չունի Կոբուրգեան պրինցի Սոֆիայում մնալուց։ Մամուլի մեծ մասը խաղաղասիրական կերպով է խօսում և ցանկութիւն է յայտնում, որ այն պատութիւնները, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, գործէին միահամուռ կերպով, ըստ որում, հակառակ դէպքում, պրինց Ֆերդինանդի իշխանութեան ապօրինի լինելու մասին յայտարարելը կասկածելի կը մնայ։ «Ազգաբնակութեան մէջ, աւելացնում են լրագիրները, շարունակվում են լուրեր տարածվել, որ իբրև թէ Կոբուրգեան պրինցը արդէն արտաքսված է Բոլգարիայից»։ Դիպլոմատիական շրջաններում լուրեր են սաացվել Հռոմից և Վիէննայից այն մասին, որ իտալական և Վիէննայի մինիստրութիւնները խոստացել են մասնակցել յաջորդ դիպլոմատիական գործողութիւնների մէջ, որպէս զի գործակցեն այն առաջադրութիւններին, որոնց նպատակն է պաշտպանել խաղաղութիւնը, և որ արդէն սկսված են դաղանի բանակցութիւններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի։ «Journal de St. Pétersbourg» ասում է, որ Բ. Դուռը յայտարարելով Կոբուրգեան պրինցին Բոլգարիայի ապօրինի իշխան, վարվել է ոչ թէ իրան պատկանող իրաւունքի համեմատ, այլ և կատարել է իր պարտքը։ Այդպիսով Բ. Դուռը գործում է այն իրաւունքի տեսակէտից, որը բղխում է դաշնադրից, և ներելի է յուսալ, որ շուտով երևան կը գայ նրա արած յայտարարութեան լոգիկական հետևանքը։ Կոբուրգեան պրինցի հեռանալուց յետոյ, հարցը աւելի կարևոր կերպարանք կը ստանայ, որովհետև հարկ կը լինի իշխանութեանը տալ աւելի հաստատ և աւելի օրինական կազմակերպութիւն,

բայց դա երբէք աւելի վտանգաւոր կերպարանք չի ստանայ, ինչպէս հաստատում են անգլիական լրագիրները, որովհետև օրինականութեան և դաշնագիրների վրա հիմնված իրաւունքին դիմելը չէ կարող ունենալ այդպիսի բնաւորութիւն։—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի զինուորական հիւանդանոցի աւագ քահանայ Ստավրովսկու նախագիծը, որը առաջարկում է զինուորական հոգևորականութեան իրաւունքները և ոռճիկը մեծացնել, վերջնականապէս հաստատված է պետական խորհրդի կողմից։

ԲԵՐԼԻՆ, 25 փետրվարի։ Երեկոյեան դէմ կայսրը իրան աւելի լաւ զգաց։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 25 փետրվարի։ Նոր մինիստրութիւնը համարեա վերջնականապէս կազմակերպված է. մինիստր-նախագահ նշանակվեցաւ Գիկա, արտաքին գործերի մինիստր՝ Ֆլեդերիկ, զինուորական մինիստր՝ դեներալ Բէրէյդէյ։

Կ. ՊՕԼԻՍ, 25 փետրվարի։ Սոֆիայում կօբուրգ պրինցի իշխանութեան ապօրինութեան վերաբերմամբ հաղորդագրութեան յանձնվելը՝ կատարվել է այսպէս. Ստամբուլովին յանձնվեցաւ համապատասխան ռուսաց յայտագիրը, և դրա հետ միասին թիւրքաց յայտագիրը, որի մէջ յայտնվում է, որ Սուլթանը միանում է ռուսաց հաղորդագրութեանը։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՖՖԻԻ

„ՍԱՄՈՒԷԼ"

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊԻ

Առաջին, երկրորդ և երրորդ գիրքը, մի մեծ հատորի մէջ ամփոփված։

ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է ուղարկեն նաև 50 կօպէկ ճանապարհի ծախսը։ Վաճառվում է հեղինակի մօտ, այլ և „Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում"։ Հեղինակի հասցէն. Въ ТИФЛИСѢ. Акопу Меликъ-Акопіану (Раффи). Въ Редакцію „АРЦАГАНКЪ". 1—10

ԾԵՐԵՆՑԻ (ԴՕԿՏՕՐ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ)

Պատմական վէպերը՝

1. Թորոս Լեռնի . . . . . գինն է 1 ռուբլի
2. Երկունք իններորդ դարու . . . . . „ 1 „
3. Թէոդորոս Ռշտունի . . . . . „ 1 „

Վաճառվում են դրանց հրատարակող Զաքարիա Գրիգորեանցի „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ"։ Հանցէն. Тифлисъ „Кавказская Книжная Торговля". 2—6

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում մարտ ամսի 30-ին, ներկայ 1888 թվին, երեկոյեան 8 ժամին լինելու է ամուրդ (առանց կրկնամուրդի) կապալով տալու մոմավաճառութիւնը հայոց եկեղեցիների և ժողովրդականների համար։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամ կէսօրի։

Հոգաբարձու Աբգար Յովհաննիսեան
Գործավար Բ. Հ. Զալալեան
3—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ վաճառվում են ամեն տեսակ թէ մրգատու և թէ զարդի բոյսերը։ Պահանջման ժամանակ պրէյսկուրանտները անվարձ են ուղարկվում։ 5—10

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԿԼԵՎՍԿԻԻ

Բժշկական ընդունարանը։ Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, քթային, ականջի և ատամի ցաւերի բժշկութիւնը, պլոմբելը և ատամներ դնելը (ասիստէնտ ատամնաբոյժ Սօբոլէվ)։ Ատամի ցաւով հիւանդների ընդունելութիւնը 9-ից մինչև 7 ժամ։ Գօլովինսկի պրոսպէկտ, տուն նախկին Բէլոյ № 5։ 8—10

ԺԻՐԱՐԴԻ ՏՈՒՐԱՅԻՆ ՄԱՆՈՒՖԱԿՊԱՀԵՍՏՈՒՄ

ԱՄԱՌՎԱՑ ԿԵՐՊԱՍՆԵՐ կանանց և երախաների զգեստների համար։
ԳՈՅՆԱՒՈՐ ԿԵՐՊԱՍՆԵՐ տղամարդկանց զգեստների համար։
Պարուսինա, (քթան) կօլոմէնկա, մոխրագոյն և սպիտակ բոգոժա, և մուլեսկիա կիսեշների համար։
Ներկայ թվի փետրվարի 1-ից բացված է ԲԱԺԻՆ ՑԱՏԿԱՊԷՍ ՄԷԲԷԼԻ և ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐԻ համար գործածվող կերպասների։
ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՏՑ
Պահեստի բաժինը ԲԱԳՈՒԻ մէջ, Օլգինսկայա փողոցում։
5—5

ՎԷՌՆԻՃԻ, ԶՄՈՒՌՈՒ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սրանով պատիւ ունի յայտնելու պ.պ. առևտրականներին և վէռնիճի (լակ), զմուռի և փայլաներկի (պօլիտուրա) գործածողներին, որ ունի յիշեալ ապրանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց մատչելի գնով, այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ։ Պատուէրները ընդունվում և կատարվում են անմիջապէս։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՐՍԵԼԸ ԵՒ ԿԱՊԵԼԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ԹՆԱՄՔՈՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ։ Մանրամասն պայմանները նշանակված են պրէյս-կուրանտի մէջ, որը տրվում և ուղարկվում է ձրիաբար։ Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և անյապաղ։ Գործարանը և պահեստը գտնվում են Ելիզավետինսկի փողոցի վրա, տուն Զիթախեանի, № 25։

Հասցէն. Тифлисъ, Самуилу Леонтьевичу Ходорскому.

12—20 (Շ)

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ

է կազմում այն դժբաղդների համար, որոնք զրկ են եղել անբարոյականութեան, բժշկապետ ՐԷՏԱՌԻ գիրքը

«ԻՆԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ»

Ռուսաց հրատարակութիւն, 3 պատկերներով, գինը 1 ռուբլի։

Թող ամեն մարդ, որ տանջվում է սարսափելի արատի հետևանքներից, կարդայ այդ գիրքը. նա ազատեց չատերին հաստատ կորուստից։ Մի ռուբլի ստանալուց յետոյ Լէյպցիգի Ռ. Ֆ. Բիրէյի հրատարակողի մագազինը ուղարկում է գիրքը ցանկացողներին։ Հասցէն՝ Германія (R. F. Bierey's Verlags-Magazin Leipzig). (Շ) 6—50

Въ редакціи газеты „МШАКЪ" продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ", публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ", или Tiflis, Redaction „Mschak". (Շ)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱԲԲԱՑՈՒԹԻՒՆԻՑ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թվին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ։

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է ատամները փչանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը։

Բացի էլիկսիրից ԲԵՆԷԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՏԱՄՆԱՓՇԻ և ՊԱՍՏԱ ատամներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագազիններում։

ԳԼԽԱՒՈՐ ԱԳԷՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

3—30 (Շ.)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՑԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.։

Հեղուկ բաղլինչների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 ռուբլի։

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դօրակի գինը 1 ր. 20 կ. գուտապէրչի մեքենան առանձին. 1/2 դօրակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դօրակի գինը 1 ռուբլի։

Կուզբի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կօպ.

Մազերի ներկ, սև, չազանակագոյն և շէկ։ Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ։ Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից։ Արկղիկը 3 ռուբլի.

Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Վօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 86—100

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ"

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

ԳԻՆՆ Է 30 կօպէկ

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետևեալ տեղերում. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կենտրօնական և ուրիշ գրավաճառանոցներում, ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Կ. Դատամեանի խանութում, ԲԱԳԻՈՒՄ՝ Թառայեանի և Շերազեանի խանութներում, ԳԱՆՁԱԿՈՄԻՍ՝ Աղայեանի խանութում, ՇՈՒՇԻ՝ Դաղեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԽԻ՝ ուսուցիչ Ն. Դաւթեանի մօտ, ԱԳՈՒԼԻՍ՝ ուսուցիչ Լեոն Թաղէոսեանի մօտ, ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ՝ Վեհապետեանի խանութում։ Օտարաքաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Х. Малумянцу, въ редакцію Мшакъ. 6—10

Дозволено цензурою, Тифлисъ 26 Февраля 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.